ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
N ՀԲՄԱՊՁԲ-20-20/2-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 30.03.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից, և Ա/Ձ Վոլոդյա Սիմոնյանը՝ /հանդես է գալիս համատեղ գործունեության պայմանագրով Ֆորտունատե ՍՊԸ-ի հետ/, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, այսուհետև՝ «Վաճառող», երկուսը միասին՝ Կողմեր, հիմք ընդունելով 20.12.2019թ. կնքված N ՀԲՄԱՊՁԲ-20-20/2-1 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.15 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը, հիմք ընդունելով համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու փաստը, փոխադարձ համաձայնությամբ որոշեցին կնքել սույն Համաձայնագիրը՝ սահմանելով Ապրանքների գնման և վճարման ժամանակացույցեր՝ համաձայն Հավելված N 1-ի և 2-ի:

1.2 Վաճառողը պարտավորվում է սույն Համաձայնագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին մատակարարել Պայմանագրի տեխնիկական բնութագրերով նախատեսված ապրանքներ (այսուհետև՝ Ապրանք)՝ համաձայն N 1 Հավելվածով սահմանված գնման ժամանակացույցի, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար՝ վճարման ժամանակացույցով՝ հավելված N 2-ով նախատեսված ժամանակահատվածում:

2. Գինը և վճարման կարգը

2.1 Սույն Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է 390,000,000 (երեք հարյուր իննսուն միլիոն) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն, որը ներառում է Համաձայնագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ նաև հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

2.2 Գնորդն իրեն հանձնած Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով նախատեսված կարգով, 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ.:

3. Այլ պայմաններ

3.1 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

3.3 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4 Սույն Համաձայնագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.5 Սույն Համաձայնագիրը կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն համաձայնագրի N 1 և 2 Հավելվածները հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.6 Սույն Համաձայնագրով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ ԻՋ վարչությունը:

4. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Ա/Ձ Վոլոդյա Սիմոնյան»
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 62/115
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011024537	ՀՀ 2471200513100000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 20074441
ՀՀ ՊՆ ՆՏԴ դեպարտամենտի պետ	Ա/Ձ
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Վ. ՍԻՄՈՆՅԱՆ

Հավելված N 1
N ՀԲՄԱՊՁԲ-20-20/2-1 ծածկագրով
պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Ապրանքի անվանում	Չ/մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումար /ՀՀ դրամ/	Ապրանքների մատակարարումը՝ 2020թ.-ին ըստ եռամսյակների,սակայն ոչ ուշ 30.10.2020թ., ընդ որում՝		
						2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	մոդուլային և շարժական շենքեր /բազմակի օգտագործման հավաքովի քառաթև գետնատնակ/	հատ	50	6,000,000	300,000,000	20	27	3
2	մոդուլային և շարժական շենքեր/ բազմակի օգտագործման ապաստարաններ/	հատ	50	1,800,000	90,000,000	20	25	5

Հավելված N 2
N ՀԲՄԱՊՁԲ-20-20/2-1 ծածկագրով
պայմանագրին կից
N 1 Համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Ապրանքի անվանում	CPV կոդ	Ընդհանուր գին/դրամ/	Վճարումը նախատեսվում է իրականացնել 2020թ., ըստ ամիսների, բայց ոչ ուշ քան 10.12.2020թ., ընդ որում՝								
				ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	մոդուլային և շարժական շենքեր /բազմակի օգտագործման հավաքովի քառաթև գետնատնակ/	44211110/503	300,000,000	120,000,000	120,000,000	120,000,000	282,000,000	282,000,000	282,000,000	300,000,000	300,000,000	300,000,000
2	մոդուլային և շարժական շենքեր/ բազմակի օգտագործման ապաստարաններ/	44211110/504	90,000,000	36,000,000	36,000,000	36,000,000	81,000,000	81,000,000	81,000,000	90,000,000	90,000,000	90,000,000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՅՈԼՉՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«Ա/Ձ Վոլոդյա Սիմոնյան»

Վ. ՍԻՄՈՆՅԱՆ